Ք.Երևան 09.02.2026թ.

,,ՍԳԿԿ,, ԻԿ Կարգապահական հանձնաժողով

Հայկ Կոշեցյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի, Արմինե Մովսիսյանի, Արմենակ Ադամյանի և նախագահող՝ Արման Սարգսյանի, քննարկելով ըստ ,,ՍԳԿԿ,, ԻԿ-ի տնօրեն՝ Անդրանիկ Ելինյանի բողոքի /այսուհետ՝ Դիմումատու/ Հայկ Կոշեցյանի նկատմամբ /այսուհետ՝ կառավարիչ/, ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի կարգապահական հանձնաժողովին ներկայացված դիմումի պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ ,,Մնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարչի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Կառավարչի կողմից վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով 2025թ.-ի սեպտեմբերի 26-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ:

Նշանակված նիստին ներկա էին հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը, Արմինե Մովսիսյանը, Արմենակ Ադամյանը և կառավարիչը: Ինչը վերաբերվում է դիմումատուի ներկայացուցչին, ապա վերջինս նիստին չէր ներկայացել:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ ,,Մնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի և կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը:

Նախ Ա.Սարգսյանը առաջարկեց դիմումի քննարկման նպատակով սահմանել հետևյալ հերթականությունը, այն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված դիմումը էլ.փոստի միջոցով ուղարկվել է ինչպես հանձնաժողովի բոլոր անդամներին, այնպես էլ կառավարչին և վերջիններս ծանոթ են դիմումին, ուստի առաջարկեց լսել կառավարչին, այնուհետև հարցերի դեպքում դրանք ուղղել նրան, իսկ այնուհետև հանձնաժողովը կանցնի կարծիքների արտահայտմանը և այդ կարծիքներից ելնելով՝ կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամների կողմից նշված առաջարկը ընդունվեց միաձայն:

Նախ հարկ է նշել, որ Դիմումատուն իր կողմից հանձնաժողովին ներկայացված դիմումով հայտնել է, որ որ սնանկության գործով կառավարիչ Հայկ Կոշեցյանը խախտել է <<ՍԳԿԿ>> ԻԿ անդամավճարների, մուտքի և այլ վճարների չափի ու վճարման Կարգի 2.7 կետը եւ 01.09.2025թ. դրությամբ և վերջինիս ամսական անդամավճարի պարտքը կազմում է 120.000 /հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, իսկ կառավարչի վարձատրությունից /5% և 2%/ անդամավճարի պարտքը 106.064 /հարյուր վեց հազար վաթսունչորս/ ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից Դիմումատուն խնդրել է դիմումը քննարկել կարգապահական հանձնաժողովում և տալ համապատասխան որոշում: Այնուհետև Ա.Ելինյանի կողմից հանձնաժողովին ներկայացվել է գրություն, որով վերջինս հայտնել է, որ կառավարչի կողմից վճարվել է 120.000 ՀՀ դրամ անդամավճարը, իսկ կառավարչի վարձատրությունից /5% եւ 2%/ անդամավճարից 106.064 ՀՀ դրամ գումարը չի վճարվել:

Նիստի ընթացքում կառավարիչը հայտնեց, որ ներկայացված դիմումի հետ համաձայն չէ, քանի որ Դիմումատուի կողմից չի ներկայացվել համապատասխան հիմքը, թե որ կոնկրետ բաշխման ծրագրի հիմքով է առաջացել այդ պարտավորությունը: Եթե Դիմումատուի կողմից ներկայացվում է բողոք, որպեսզի կառավարչին ենթարկեն կարգապահական պատասխանատվության, ապա դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացվի նաև հիմնավորում, թե որ ժամանակահատվածի և որ կոնկրետ գործի բաշխման ծրագրից է առաջացել նշված պարտավորությունը: Կառավարիչը հայտնեց նաև, որ նման անդամավճարների մուծման ժամանակ իր կողմից վճարվել է շուրջ 10.000.000 ՀՀ դրամ: Կառավարիչը հայտնեց նաև, որ որպես կառավարիչ, ով հանդիսանում է ԻԿԿ-ի անդամ, տեղեկացված չէ, թե վերջ ի վերջո այդ վճարված անդամավճարները ինչ կարգավիճակում են ներկայումս և ինչ հետագա գործընթաց պետք է ծավալվի այդ հավաքագրված գումարների հետ կապված:

Հանձնաժողովի անդամների կողմից ըստ էության հարցեր չհնչեցվեցին և նման պայմաններում հանձնաժողովը հարուցված կարգապահական վարույթի քննությունը համարեց ավարտված:

Կարգապահական վարույթի ընթացքում, կարգապահական հանձնաժողովը կայացրեց որոշում, որով հանձնաժողովը հիմք ընդունելով և ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 3-րդ մասի պահանջները, ինչպես նաև անալոգիա կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի պահանջները, որոշեց Հայկ Կոշեցյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:Այնուհետև ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի տնօրեն Անդրանիկ Ելինյանի կողմից, 14.11.2025թ.-ին, կարգապահական հանձնաժողովի նախագահի անվամբ ներկայացված դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի հիմքով, հարուցված կարգապահական վարույթը վեր է սկսվել և նշանակվել են կարգապահական նիստեր:

Միաժամանակ կարգապահական հանձնաժողովը հաստատված է համարում այն հանգամանքը, որ կարգապահական վարույթի ընթացքում, կառավարչի կողմից կատարվել են դիմում նշված՝ ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի նկատմամբ ունեցած պարտավորությունը:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները, որոշեց Հայկ Կոշեցյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Ա.Ադամյան

Հ.Գևորգյան